

# ՄԻԶԱՋՎՅԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԽԱՂԱՂԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ,  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԳԱԳԻԿ ՀՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ

Միջազգային խաղաղության հաստատմանը միտված գործողությունները<sup>1</sup> նպատակաւորված են հակամարտությունների կանխադգելմանը, կարգավորմանը, հետհակամարտային խաղաղության ամրապնդմանը, քաղաքացիական պատերազմների դադարեցմանը և կայուն ու հարատև խաղաղության հաստատմանը:

Խաղաղապահության սկզբնական պատկերացումները ժամանակի ընթացքում փոխվել են, և այսօր «խաղաղապահություն» հասկացությունը<sup>2</sup> լայն կիրառում ունի և ներառում է բազմաշերտ ու բազմակողմ գործառույթներ: Ներկայում խաղաղապահ գործողությունները մեծ նասամբ արտոնվում են ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլխում շարադրված նորմերի համաձայն, իսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ԱԽ) բանաձևերում հաճախ կարելի է հանդիպել «օգտագործել անհրաժեշտ բոլոր միջոցները» ձևակերպմանը: Հետաքրքրական են հարցին առնչվող վերջին զարգացումները: Մասնավորապես, 2013 թ. մարտին ընդունված ՄԱԿ-ի ԱԽ 2098 բանաձևով ՄԱԿ-ի պատմության մեջ առաջին անգամ լիազորվեց ստեղծել «հարձակողական բրիգադ». Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում ՄԱԿ-ի կայունացնող առաքելությանը (MONUSCO) արտոնվեց հարձակողական ուժ կիրառել խաղաղությունը խախտողների նկատմամբ, ինչպես նաև լիազորվեց քաղաքացիական անձանց պաշտպանության և այլ գործառույթների հետ մեկտեղ՝ «վնասազերծել զինված խմբերին ինտերվենցիոն բրիգադի միջոցով»<sup>3</sup>:

Խաղաղության հաստատմանն ուղղված գործողությունների իրավական հիմքերը խարսխված են ՄԱԿ-ի ԱԽ-ի, Գլխավոր ասամբլեայի (այսուհետ՝ ԳԱ) և տարածաշրջանային կազմակերպությունների ընդհանուր լիազորությունների վրա<sup>4</sup>: Թեև ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ չի օգտագործ-

<sup>1</sup> Ա. Նիկիտինը, շարունակելով ֆոն Կլաուզելի հայտնի խոսքը, կարծիք է հայտնում, որ ինչպես պատերազմները, այնպես էլ խաղաղապահ գործողությունները «պետությունների քաղաքականության շարունակությունն են այլ միջոցներով» (**Նիկիտին Ա. Ի.** Կոնֆլիկտы, терроризм, миротворчество. М., 2009, с. 50):

<sup>2</sup> Ներկայումս ավելի հաճախ օգտագործվում է «գործուն խաղաղապահություն», «խաղաղության աջակցության գործողություն» կամ որպես ընդհանրական եզրույթ «խաղաղության հաստատմանն ուղղված գործողություն» հասկացությունները, իսկ որոշ հեղինակներ գերադասում են օգտագործել «ռազմականացված խաղաղապահություն» ձևակերպությը: Հեղինակների մի մասը խաղաղապահ գործողությունները բաժանում է սերունդների:

<sup>3</sup> Տե՛ս UN SC Resolution S/RES/2098 (2013), 28. 03. 2013, § 9 & § 12 (b):

<sup>4</sup> Տե՛ս **Terry D. Gill**, Peace Operations: Characterization and Legal Basis for Peace Operations, in "The Handbook of the International Law of Military Operations", Terry D. Gill and Dieter Fleck, Ed., Oxford, 2011, էջ 137:

վում «խաղաղապահություն» եզրույթը, սակայն այս գործիքը կարևոր դերակատարություն ունի հականմարտությունների կարգավորման և կայուն խաղաղության հաստատման գործում:

Հետևաբար, քանի որ ներկայումս խաղաղապահ գործողություններ հիմնելիս ՄԱԿ-ի Ախ-Ն հղում է կատարում Կանոնադրության VII գլխին, որն առնչվում է հարկադրական միջոցառումներին, անհրաժեշտ է ուսումնասիրել խաղաղապահության, ինչպես նաև խաղաղություն հարկադրելու գործողության իրավական հիմքերը, ինչը հնարավորություն կընձեռի վեր հանելու այս երկու գործողությունների առանձնահատկություններն ու տարբերությունները: Բացի այդ, քանի որ ներկայումս ՄԱԿ-ին գուգահեռ խաղաղապահ գործողություններ են իրականացնում նաև տարածաշրջանային կազմակերպությունները՝ ՄԱԿ-ի Ախ-ի լիազորությամբ կամ առանց դրա, ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել խաղաղության հաստատման նպատակով տարածաշրջանային կազմակերպությունների կողմից իրականացվող գործողությունների իրավական հիմքերը:

**Խաղաղապահությունը** առանձնահատուկ դերակատարում ունի հականմարտությունների կարգավորման գործում և դրա կարևորագույն գործիքներից է: ՄԱԿ-ի սահմանման համաձայն՝ «խաղաղապահությունը միջոց/ներող է՝ նախատեսված պահպանելու խաղաղությունը, որքան էլ այն փխրուն լինի, և աջակցելու խաղաղարարների կողմից ձեռք բերված համաձայնագրերի իրականացմանը»<sup>5</sup>: Տարիների ընթացքում «խաղաղապահություն» հասկացությունը զարգացում է ապրել և հրադադարների մոնիթորինգի ռազմական մոդելից ու պետությունների միջև պատերազմներից հետո զորքերի տարանջատման եղանակից հիմնականում վերաճել է ավելի համալիր մոդելի՝ ռազմական, ոստիկանական և քաղաքացիական տարբերի համադրմամբ, որի նպատակն է աջակցել կայուն խաղաղության հիմքերի հաստատմանը:

**Խաղաղապահության սկզբունքները:** Չնայած «խաղաղապահություն» եզրույթը և դրա ընկալումը ժամանակի ընթացքում ձևավորվել<sup>6</sup> են, խաղաղապահությունը շարունակում է խարսխված մնալ կողմերի համաձայնության, անկողմնակալության և ուժի սահմանափակ գործադրման՝ հիմնարար սկզբունքների վրա, որոնք ավանդաբար համարվել են խաղաղապահության հիմնայունները: Այս հիմնարար սկզբունքները «փոխկապակցված են» և «փոխադարձաբար միմյանց ամրապնդող»<sup>8</sup>: Նիկոլաս Յագուրիան իրավացիորեն նշում է, որ այս երեք սկզբունքները «ձեռք են բերել սահմանադրական կարգավիճակ», և դրանք «շարունակում են գործել, նույնիսկ եթե խաղաղապահության ենթատեքստը ծայ-

<sup>5</sup> "United Nations Peacekeeping Operations, Principles and Guidelines", 2008, DPKO, p. 18:

<sup>6</sup> 1988-1993 թթ. ընթացքում խաղաղության հաստատմանն ուղղված գործողությունները ենթարկվել են քանակական, նորմատիվ և որակական տրանսֆորմացիայի (տե՛ս Alex J. Bellamy and Paul D. Williams, Understanding Peacekeeping, 2010, էջ 93):

<sup>7</sup> ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Բուտրոս-Ղալին առանձնացնում էր հատկապես այս երեք կարևորագույն սկզբունքները, որոնց պահպանումը ընկած է եղել հաջողված խաղաղապահ գործողությունների հիմքում (տե՛ս UN Doc. A/50/60 S/1995/1, "Supplement to an Agenda for Peace", Position Paper of the Secretary-General, 25. 01. 1995, § 33):

<sup>8</sup> United Nations Peacekeeping Operations, "Principles and Guidelines", 2008, DPKO, p. 31.

րաստիճան փոփոխվել է»<sup>9</sup>: Խաղաղապահ գործողության հաջողության տեսանկյունից նշված սկզբունքներին պետք է ավելացնել նաև լեգիտիմությունը, վստահելիությունը, ազգային և տեղական սեփականատիրության խրախուսումը:

Կողմերի համաձայնության սկզբունքը խաղաղապահության կարևոր նախապայման է. խաղաղապահ առաքելությունը կարող է տեղակայվել, եթե ստացվել է հակամարտության շահագրգիռ կողմերի համաձայնությունը: Այն ենթադրում է, որ համաձայնելով խաղաղապահ գործողության տեղակայմանը՝ հակամարտող կողմերը հանձն են առնում ներգրավվել հակամարտության կարգավորման քաղաքական գործընթացում և ընդունում են, որ խաղաղապահ առաքելության ներկայության նպատակը այդ գործընթացին աջակցություն ցուցաբերելուն է: Նման համաձայնության բացակայության դեպքում խաղաղապահ առաքելությունը հակամարտության կողմ դառնալու ռիսկի է դիմում, որի հետևանքով այն խաղաղապահությունից կարող է վերածվել խաղաղության հարկադրման գործողության:

Անկողմնակալության սկզբունքը ենթադրում է, որ խաղաղապահ առաքելությունը գերապատվություն չի տալիս որևէ կողմին և բոլորին վերաբերում է հավասարապես: ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների հարցերով պաշտոնյա Շաշի Թարուրը նշում է, որ «անկողմնակալությունը խաղաղապահության բբվածինն է»<sup>10</sup>: Անկողմնակալության ժամանակակից մեկնաբանումը չի նշանակում չեզոքություն. համաձայն ՄԱԿ-ի բնորոշման՝ ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունները «պետք է իրականացնեն իրենց մանդատն առանց նախապատվություն տալու որևէ կողմին կամ նախատրամադրված լինելու», սակայն հակամարտության կողմերի հետ իրենց հարաբերություններում ՄԱԿ-ի խաղաղապահները պետք է լինեն «անկողմնակալ, բայց ոչ չեզոք իրենց մանդատի իրականացման ընթացքում»<sup>11</sup>: Այսինքն՝ անկողմնակալությունն ուղղակի նշանակում է յուրաքանչյուրին վերաբերություն միևնույն սկզբունքների համաձայն, մինչդեռ չեզոքությունը նշանակում է որևէ դիրքորոշման նախապատվություն չտալ<sup>12</sup>: Այլ խոսքով, խաղաղապահ առաքելությունը չի կարող անհաղորդ մնալ և չգործել, եթե կողմերից մեկը հավատարիմ չէ խաղաղության գործընթացին կամ ուժնահարում է միջազգային նորմերն ու սկզբունքները:

Ուժի չգործադրման սկզբունքը փոխկապակցված է վերոնշյալ երկու հիմնարար սկզբունքների հետ. դրանք փոխլրացնում են իրար: Եթե սառը պատերազմի ընթացքում ուժ գործադրելը<sup>13</sup> ենթադրվում էր գլխավորա-

<sup>9</sup> Nicholas Tsagourias, Consent, Neutrality/Impartiality and the Use of Force in Peacekeeping: Their Constitutional Dimension, Journal of Conflict and Security Law, 11:3, 2006, p. 465-466.

<sup>10</sup> Շ. Թարուրը մասնավիրապես նշում է. «Միակ ձևը, որ խաղաղապահները կարող են գործել, այն է, որ լինեն վստահելի, պարզ և թափանցիկ իրենց հարաբերություններում, և քայլ պահվեն հաղորդակցության ուղիները» (Shashi Tharoor, Should UN peacekeeping go "back to basics?", Survival: Global Politics and Strategy, V. 37 (4), 1995, p. 58):

<sup>11</sup> "United Nations Peacekeeping Operations, Principles and Guidelines", 2008, DPKO, p. 33:

<sup>12</sup> Տես Alex J. Bellamy and Paul D. Williams, նշվ. աշխ., էջ 281:

<sup>13</sup> Սառը պատերազմի ընթացքում ուժ չգործադրելը դիտվել է որպես խաղաղապահության հաջողության գրավականներից մեկը, և պատահական չէ, որ քաղաքական հասունական հարցերով ՄԱԿ-ի գրք նախկին տեղակալ Բ. Ուրքհարթը նկատում է, որ «խաղաղապահ ուժի իրական հզորությունը ոչ թե ուժ կիրառելու կարողությունն է, այլ իրենց ուժ չկիրառեն է՝ այդպիսով վեր մնալով հակամարտությունից և պահպանելով իր ու-

պես խաղաղապահների ինքնապաշտպանության նկատառումներով, ապա ժամանակի ընթացքում ուժի գործադրման հարցում մոտեցումը փոխվել է, և ինքնապաշտպանության ավելացել է նաև նանդատի պաշտպանությունը: Դաշվի առնելով խաղաղապահ առաքելությունների 1990-ականների սկզբների ձախողումները՝ երբ նրանք չկարողացան կանխել զանգվածային բռնություններն ու ջարդերը Սրեբրենիցայում ու Բոսնիայի այլ վայրերում և ցեղասպանությունը Ռուանդայում, ՄԱԿ-ի բարձրաստիճան փորձագիտական խումբն իր գեկույցում (հայտնի է որպես «Բրահիմի գեկույց») վերանայեց խաղաղապահության հայեցակարգը և ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությանը վերապահեց առավել բազմակողմ գործառություններ. առաջարկվում էր, որ ՄԱԿ-ի խաղաղապահները տեղակայվելուն պես պետք է ի վիճակի լինեն իրականացնելու իրենց մանդատը «արհեստավարժութեն և հաջողությամբ»<sup>14</sup>:

**Խաղաղապահության իրավական հիմքերը** կանոնակարգվում են ՄԱԿ-ի Աև-ի ընդունած բանաձևերով, իսկ տարածաշրջանային կազմակերպությունների դեպքում՝ նաև վերջիններիս ընդունած որոշումներով, խաղաղապահ գործողությանը տրված մանդատով, ինչպես նաև ուժի կիրառումը և խաղաղապահների ազատ տեղաշարժը կանոնակարգող «Միջամտության կանոնների» և «Զինված ուժերի կարգավիճակի» մասին փաստաթղթերով: Բացի այդ, խաղաղապահ գործողությունների ժամանակ, մանավանդ երբ խաղաղապահ գործերը ներգրավվում են ռազմական գործողությունների մեջ, միջազգային հումանիտար իրավունքի սկզբունքները և կանոնները, ինչպես նաև Մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերը կիրառելի են դառնում խաղաղապահ առաքելության գործունեության ամբողջ ընթացքում<sup>15</sup>:

Յարկ է նկատել, որ խաղաղապահ առաքելություններ հիմնելիս ՄԱԿ-ի Աև բանաձևերում երբևէ հստակ հղում չի տրվել կանոնադրության VI գլխիմ<sup>16</sup>, իսկ «խաղաղապահություն» եզրույթը ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ որևէ տեղ չի հիշատակվում: Մինչդեռ սառը պատերազմի ավարտից հետո Աև-ն խաղաղապահ առաքելությունների ստեղծման բանաձևերում սկսեց ավելի հաճախ հղում անել կանոնադրության VII գլխին, սակայն չկոնկրետացնելով, թե որ հոդվածի ներքո է հիմնվում խաղաղապահ գործողությունը: Խաղաղապահությունը հաճախ անվանում են «Կանոնադրության

ողջ դիրքն ու հեղինակությունը» (*Brian Urquhart, A Life in Peace and War*, (Weidenfeld & Nicolson: London, 1987), p. 178–79, մեցքերումն ըստ՝ **Trevor Findlay**, *The Use of Force in UN Peace Operations*, Oxford University Press, 2002, p. 5):

<sup>14</sup> Դա նշանակում է, որ կապույտ սաղավարտավորները պետք է ունակ լինեն «պաշտպանելու իրենց, առաքելության այլ բաղադրիչները և առաքելության նանդատը, ինչպես նաև կիրառելու «գործուն միջամտության կանոններ՝ ուղղված նրանց դեմ, ովքեր կղրժեն խաղաղության համաձայնագրով ստանձնած հանձնառությունները կամ կծանրացնելով՝ բռնություն կիրառելով» («Report of the Panel on United Nations Peace Operations», 2000, § 49 & § 55):

<sup>15</sup> Տես **Terry D. Gill**, նշվ. աշխ., էջ 141, նաև՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի գեկույցը՝ խաղաղապահ գործողությունների ժամանակ միջազգային հումանիտար իրավունքի կիրառելության վերաբերյալ, ST/SGB/1999/13, Secretary-General's Bulletin (Observance by United Nations forces of international humanitarian law), 6. 08. 1999:

<sup>16</sup> Տես **James Sloan**, *The Militarisation of Peacekeeping in the Twenty-First Century*, Oxford, Hart Publishing, 2011, էջ 65:

վեց և կես գլխի» ներքո իրականացվող գործողություն, այսինքն՝ այն ընկնում է Կանոնադրության գլուխ VI-ի՝ Վեճերի խաղաղ կարգավորումը, և գլուխ VII-ի՝ Գործողություններ խաղաղության վտանգման, խաղաղության խախտման և ազրեսիայի առնչությամբ (հարկադրական միջոցառումներ), մեջտեղում:

Թեև Ալս-ն երբեք չի վկայակոչել գլուխ VI-ը՝ խաղաղապահ գործողություն իիմնելու ժամանակ, ՄԱԿ-ի նախակին Գլխավոր քարտուղար Դադ Շամնարշելդն իր գեկուցում նշում էր, որ Լիբանանում ՄԱԿ-ի դիտորդական խմբի (UNOGIL) առաքելությունը իիմնելիս Ալս-ն «ամբողջությամբ գործել է Կանոնադրության գլուխ VI-ի սահմանների շրջանակում»<sup>17</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ գլուխ VI-ից բխող գործողություններն իրենց բնույթով միայն խորհրդատվական են<sup>18</sup> և չեն նախատեսում հարկադրական միջոցառումներ: Թեև Յ. Մըկթոբերին և Ն. Ուայթը նշում են, որ գլուխ VI-ը չի համապատասխանում խաղաղապահության գործառությներին, քանի որ այն ենթադրում է ռազմական ներկայություն, այնուամենայնիվ, քանի որ խաղաղապահությունը «ավելի մոտ է կամ կապված է խաղաղ միջոցներով կարգավորմանը», քան թե գլուխ VII-ից բխող գործողություններին, նրանք գտնում են, որ խաղաղապահությունը «կարող է դիտվել որպես իշխանություն, որը բխում է Գլուխ VI-ի հոդված 36(1)-ից»<sup>19</sup>: Խաղաղապահության իրավական իիմքերի մասին խոսելիս Զեյմս Սլուանը նշում է, որ ՄԱԿ-ի Կանոնադրության որոշակի հոդվածներ՝ «ներառյալ, հավանաբար, գլուխ VI-ի հոդված 33(2)-ը, հոդված 34-ը և հոդված 36-ը, ինչպես նաև գլուխ VII-ի 39 և 40 հոդվածները, կարող են անվիճելիորեն ապահովել նման տեսակի գործողությունների ակնհայտ հիմքեր»<sup>20</sup>:

Ի տարբերություն գլուխ VI-ի՝ գլուխ VII-ի հոդվածները նախատեսում են հարկադրական միջոցառումներ: Մասնավորապես հոդված 40-ը<sup>21</sup> նա-

<sup>17</sup> UN Doc A/3943, "Summary Study of the Experience Derived from the Establishment and Operation of the Force: Report of the Secretary-General", 9. 10. 1958, § 180: Իսկ Ն. Ուայթը նկատում է, որ ՄԱԿ-ի կողմից Լիբանանում հիմված UNOGIL առաքելությունը կարող էր ստեղծված լինել Կանոնադրության 34 հոդվածի հիման վրա, քանի որ վերջինիս գործառությունը «հավանաբար մնացել է ին որպես հետաքրննչական և դիտորդական» (Nigel D White, *The United Nations and the Maintenance of International Peace and Security*, Manchester, Manchester Press, 1990, p. 186): Մինչդեռ Օ. Սչաքթերը նշում է, որ այնպիսի «դիտորդական» առաքելություններ, ինչպիսին է, օրինակ, հրադադարի վերահսկողությունը, արտոնված են Ալս-ի կողմից և ոչ պարզորոշ, սակայն այնուամենանիվ հասկացվում է, որ դրանք ընկնում են 24 հոդվածով Ալս-ին տրված ընդիհանուր լիազորությունների, ինչպես նաև 36 հոդվածի գործողության ներքո (տես Oscar Schachter, *Authorized Uses of Force by the United Nations and Regional Organizations*, in Lori Damrosch and David Scheffer (eds) "Law and Force in the New International Order", Boudler, Col, Westview, 1991, էջ 81, նեջերումը ըստ James Sloan, նշվ. աշխ., էջ 79, (note 61):

<sup>18</sup> Տես Վիգեն Բոչարյան, Միջազգային իրավունք, Եր., 2002, էջ 244: Կարծիք կանակ, որ Յոդված 34-ը այս առումով բացառություն է (տես Theodor Schweisfurth, "Article 34" in Bruno Simma, ed., "The Charter of the United Nations: A Commentary" 2nd edn., vol. 1, Oxford, Oxford University Press, 2002, էջ 594-608, 605-606, նեջերումը ըստ James Sloan, նշվ. աշխ., էջ 79 (note 62):

<sup>19</sup> Տես Hilaire McCoubrey and Nigel D. White, "The Blue Helmets: Legal Regulation of the United Nations Military Operations", Aldershot, Dartmouth, 1996, էջ 50-51, նեջերումը ըստ James Sloan, նշվ. աշխ., էջ 79:

<sup>20</sup> James Sloan, նշվ. աշխ., էջ 113:

<sup>21</sup> Յոդված 40-ի առնչությամբ հարկ է նկատել, որ իրավիճակի վատրարացումը

խատեսում է «պարտադիր»<sup>22</sup> բնույթ կրող «ժամանակավոր միջոցառումների»<sup>23</sup> իրականացում մինչև Ախ-ի կողմից 39 հոդվածից բխող «խորհրդատվական բնույթի հանձնարարականներ» ներկայացնելը կամ 41 և 42 հոդվածներով նախատեսված միջոցների կիրառման վերաբերյալ որոշում կայացնելը: Մյուս կողմից, արդեն 39 հոդվածի «հանձնարարականների» հիման վրա կարող են կիրառվել հոդված 41-ով նախատեսված պատժամիջոցները և հոդված 42-ով նախատեսված ուժի գործադրումը:

Թեև միջազգային խաղաղության հաստատման և անվտանգության ապահովման գործում իրմանական դերակատարումը վերապահված է Անվտանգության խորհրդին, Գլխավոր ասամբլեան և կարող է ստեղծել խաղաղապահ առաքելություն՝ Կանոնադրությանը վերջինիս վերապահված ընդհանուր իրավասության ներքո<sup>24</sup> և հատկապես 1950 թ. ընդունված «Միավորվել հանուն խաղաղության» ԳԱ բանաձևի համաձայն<sup>25</sup>:

Բացի այդ, խաղաղապահ գործողություններ կարող են իրականացվել նաև ՄԱԿ-ի Կանոնադրության գլուխ VІІІ-ի շրջանակներում, մասնավորապես՝ տարածաշրջանային կազմակերպությունների կամ համաձայնությունների կողմից: Տարածաշրջանային կազմակերպությունների կողմից հիմնված խաղաղապահ գործողությունները նույնպես պետք է ստանան

կանխելու նապատակով Ախ-ն կարող է «պահանջել շահագրգիռ կողմերից կատարելու ան ժամանակավոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի կիամարիյ»: Դեռևսաքար, կարելի է մեկնարանել, որ 40 հոդվածով նախատեսված «անհրաժեշտ» ժամանակավոր միջոցառումները կարող են նաև ներառել այնպիսի գործողություն, ինչպիսին է ուժի գործադրումը առաքելության մանդատի պաշտպանության նպատակով, որոնք իրենց բնույթով հոդված 41-ի և հոդված 42-ի նման հարկադրական չեն, կրում են ժամանակավոր (կարծատկ) բնույթ և գլխավոր՝ հիմնված են համաձայնության վրա:

<sup>22</sup> Կարծիք կա, որ Կանոնադրության 40 հոդվածը կարող է պարտադիր լինել պետությունների համար միայն այն դեպքում, եթե Ախ-ն «հստակ» արտահայտում է նման կերպ վարվելու «իր մտադրությունը»: Ավելի մանրամասն տես James Sloan, նշվ. աշխ., էջ 88-89:

<sup>23</sup> Անվտանգության խորհրդություն վկայակոչել է այդպիսի ժամանակավոր միջոցառումներ՝ իրադադար հաստատելու կող անելով 1980-1988 թթ. Իրան-իրաքյան հակամարտության առնչությամբ: Սասմավորապես, Քրիստին Գրեյը նկատում է, որ Ախ 598 (20. 07. 1987) բանաձևը «անսովոր կերպով, հստակ հղում է կատարում 39 և 40 հոդվածներին» (Christine Gray, "The Use of Force and the International Legal Order" in Malcolm D. Evans (Ed.), "International Law", 3<sup>rd</sup> Ed., Oxford, OUP, 2010, p. 634):

<sup>24</sup> Տես "Certain expenses of the United Nations (Article 17, paragraph 2, of the Charter)", Advisory Opinion of 20 July 1962, ICJ Reports, 1962, էջ 151, § 163: Մասնավորապես, ԱՍԴ խորհրդատվական կարծիքում նշվում է, որ Գլխավոր ասամբլեան (համաձայն 11 հոդվածի) կարող է քննարկել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը վերաբերու հարցեր, իսկ 14 հոդվածը լիազորում է Գլխավոր ասամբլեային «միջոցառումներ հանձնարարելու ցանկացած իրադրության խաղաղ կարգվորման համար՝ անկախ դրա ծագումից, որը ըստ իրեն, կարող է սպառնալ ընդհանուր բարօրությանը կամ ազգերի բարեկանական հարաբերություններին, ներայալ այն իրադրությունները, որոնք առաջանում են Միավորված ազգերի կազմակերպության նպատակներն ու սկզբունքները շարադրող սույն կանոնադրության դրույթները խախտելու հետևանքով»: ԱՍԴ-ն եզրակացնում է, որ «միջոցառումներ» բարը ենթադրում է որոշակի գործողություն, և 14 հոդվածով նախատեսված միակ սահմանափակումը Գլխավոր ասամբլեայի նկատմամբ 12 հոդվածով նախատեսված դեպքերն են, եթե խնդրո առարկա հարցը գտնվում է Անվտանգության խորհրդի քննարկման օրակարգում: Տես նաև ԱՍԴ խորհրդատվական կարծիքի § 177-ը:

<sup>25</sup> Այն գործնականում իր կիրառումը գտել է մի շարք դեպքերում, մասնավորապես Սուեդի ջրանցքի շուրջ ծագած ճգնաժամի ժամանակ՝ 1956 թ., եթե ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունը (UNEF I) ստեղծվեց ԳԱ-ի կողմից՝ համաձայն վերոնշյալ բանաձևի:

շահագրգիռ կողմերի համաձայնությունը և գործեն համաձայն խաղաղապահության հիմնարար մյուս երկու սկզբունքների՝ անկողմնակալության և ուժի սահմանափակ կիրառման հիման վրա: Որպես այդպիսին՝ տարածաշրջանային կազմակերպությունները խաղաղապահ գործողություններ իրականացնելու համար թեև կարիք չունեն ստանալու ՄԱԿ-ի ԱԽ արտոնությունը<sup>26</sup>, սակայն ԱԽ բանաձնի առկայությունը ցանկալի է<sup>27</sup>:

Խաղաղապահության սկզբունքները և իրավական հիմքերը քննարկելուց հետո կարիք կա դիտարկելու նաև խաղաղության հարկադրման գործողության իրավական հիմքերն ու առանձնահատկությունները, և այս երկու գործողությունների համեմատության միջոցով վեր հանելու դրանց հիմնական տարրերությունները:

**Խաղաղության հարկադրման**<sup>28</sup> գործողություններն ընդհանուր առմամբ բնորոշվում են որպես ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլխով լիազորված կամ վերջինիս ընդհանուր լիազորություններից բխող գործողություններ<sup>29</sup>: Մասնավորապես, ԱԽ-ն նախ որոշում է «խաղաղության ցանկացած վտանգման, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը» (հոդված 39), այնուհետև կարող է «պահանջել շահագրգիռ կողմերից կատարելու այն ժամանակավոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի կիամարի» (հոդված 40) կամ կիրառել պատժամիջոցներ<sup>30</sup> (հոդված 41) և/կամ ուժի գործադրում՝ «միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար», եթե 41 հոդվածով նախատեսված միջոցառումները անբավարար կլինեն (հոդված 42):

Յարկ ենք համարում քննարկել հարկադրման և խաղաղության հարկադրման գործողությունների միջև տարբերությունները: Յարկադրման գործողությունը ենթարկվում է պետության դեմ. մասնավորապես՝ ԱԽ-ն Կանոնադրության VII գլխով իրեն վերապահված ընդհանուր լիազորությունների շրջանակներում որոշում է կայացնում հարկադրական միջոցառումներ իրականացնելու այն պետության դեմ, որի կողմից այլ պետու-

<sup>26</sup> Տե՛ս Terry D. Gill, նշվ. աշխ., էջ 139:

<sup>27</sup> Տե՛ս Eric P. J. Myjer and Nigel D. White, Peace Operations Conducted by Regional Organizations and Arrangements, in Terry D. Gill and Dieter Fleck, նշվ. աշխ., էջ 163:

<sup>28</sup> ՄԱԿ-ի սահմանման համաձայն՝ «Անվտանգության խորհրդի լիազորությանը խաղաղության հարկադրումը ներառում է մի շարք հարկադրական գործողությունների, ներառյալ ռազմական ուժի կիրառում: Նմանատիպ գործողությունները նպատակատրդված են վերականգնելու միջազգային խաղաղությունը և անվտանգությունը այն իրավիճակներում, երբ Անվտանգության խորհրդը բացահայտել է խաղաղության վտանգման, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայություն: Անվտանգության խորհրդը այնտեղ, որտեղ դա տեղի է, կարող է օգտագործել տարածաշրջանային կազմակերպությունները և կառույցները՝ իր լիազորության ներք հարկադրական գործողություն իրականացնելու նպատակով» ("United Nations Peacekeeping operations, Principles and Guidelines", 2008, DPKO, p. 18):

<sup>29</sup> Յարկ է նկատել, որ 1946 թ.-ից մինչև 1989 թ. ՄԱԿ-ի կողմից Կանոնադրության VII գլուխը վկայակոչվել է 24 անգամ: Յամեմատության համար նշենք, որ, օրինակ, 1990-ից մինչև 1999 թ. ընդունվել է 166 բանաձև, որտեղ վկայակոչվում է Կանոնադրության VII գլուխը, և այդ թիվը գնալով աճում է (տե՛ս Alex J. Bellamy and Paul D. Williams, նշվ. աշխ., էջ 215):

<sup>30</sup> 2002 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 1373 բանաձևը, որով ընդունվում էր պատժամիջոցների շրջանակը. պահանջվում էր, որ անդամ պետություններն իրենց սահմանների ներսում քայլեր ձեռնարկեն ահաբեկչական գործողությունների ֆինանսավորումը քրեականացնելու ուղղությամբ:

թյան նկատմամբ իրականացվել է ազրեսիա, կամ որի գործողությունները լոշորեն վտանգել կամ խախտել են միջազգային խաղաղությունը<sup>31</sup>:

Ի տարբերություն հարկադրման գործողության՝ խաղաղության հարկադրումը իրականացվում է արդեն պետության ներսում<sup>32</sup>, և այդ գործողության նպատակն է խաղաղություն պարտադրել հակամարտող կողմերին, ինչպես եղավ Բոսնիա և Զերցեզովինայի պարագայում, երբ ՄԱԿ-ի ԱԽ լիազորությամբ ՆԱՏՕ-ի կողմից իրականացվեց խաղաղության հարկադրման գործողություն: Խաղաղության հարկադրման գործողության իրավական իհմքերը նույնանույն գործողություն են ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլուխում, և ուժի կիրառումը չի ենթադրում լայնածավալ պատերազմական գործողություններին բնորոշ ռազմական գործողություններ, իսկ ժամանակային առումով կարճատև է և ուղղված է սովորաբար խաղաղությունը խախտող կամ վտանգող կողմ(եր)ին խաղաղություն պարտադրելուն պետության ներսում:

Դայեցակարգային և իրավական առումով խաղաղապահ և խաղաղության հարկադրման գործողությունների միջև կամ մի շարք կարևոր տարբերություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Եթե խաղաղապահության (ներառյալ գործուն խաղաղապահության), այդ թվում նաև հակամարտության կանխարգելման, խաղաղարարության և խաղաղաշինության համար շահագրգիռ (հիմնական) կողմերի համաձայնությունը անհրաժեշտ նախապայման է, ապա խաղաղության հարկադրման գործողության ժամանակ կողմերի համաձայնությունը պարտադիր չէ, քանի որ ծեռնարկվելիք միջոցառումներն ուղղված են խաղաղությունը խախտող կողմի դեմ:

2. Խաղաղապահությունը իհմնվում է անկողմնակալության վրա, մինչեւ խաղաղության հարկադրումը ենթադրում է հակամարտող կողմերից մեկի նկատմամբ կողմնակալություն, այսինքն՝ հակամարտության շահագրգիռ կողմերից այն մեկին, որը խախտում է խաղաղության գործընթացով ստանձնած համձնառությունների կատարումը, կարող է պարտադրվել խաղաղություն:

<sup>31</sup> Այս առումով կարելի է հիշատակել երկու օրինակ. առաջինը 1950 թ. Հյուսիսային Կորեայի դեմ իրականացված հարկադրման գործողությունն է՝ ի պատասխան Հյուսիսային Կորեայի կողմից Հարավային Կորեայի դեմ իրականացված հարձակման, և երկրորդը Իրաքի նկատմամբ իրականացված հարկադրական գործողությունն է 1991 թ.-ին՝ ի պատասխան Իրաքի կողմից 1990 թ. օգոստոսին Յուվեր Անդրխուժելուն: Դատկանշական է, որ մինչ օրս ՄԱԿ-ը ինքնուրույն չի իրականացրել որևէ հարկադրման գործողություն. նշված երկու գործողություններն է ՄԱԿ-ը պատվիրակել է պետությունների կողմիցային՝ ԱՄՆ ղեկավարությամբ: Ի դեպ՝ հարկ է նկատել, որ Անվտանգության խորհրդին հաջողվեց ընդունել Հյուսիսային Կորեայի գործողությունների վերաբերյալ 82, 83 և 84 բանաձեռքը միայն այն պատճառով, որ ԽՍՀՄ-ը այդ պահին բոյկուտել և չէր մասնակցում ԱՄՆ նիստին, իսկ ավելի ուշ, երբ արդեն մասնակցում էր, վեստ կիրառեց: Արդյունքը եղավ այն, որ արևմտյան պետությունների ջանքերով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1950 թ. նոյեմբերին ընդունվեց «Միավորվել հանուն խաղաղության» ("Uniting for Peace") 377 (V) բանաձեռք, որը Հյուսիսային Կորեայի դեմ ուղղված հարկադրման գործողության իրականացման հիմք համուխացավ: Այս բանաձեռքը սարը պատերազմի ընթացքում մի շարք դեպքերում ևս կիրառվել է:

<sup>32</sup> Խաղաղության հարկադրման նմանօրինակ գործողություններից են 1960-ական-ների սկզբներին կոնգոյում ՄԱԿ-ի կողմից ուժի գործադրումը, 1990-ականների սկզբներին՝ Սոմալիում, Արևելյան Կոնգոյում (DRC), 1994 թ. Զաիրիի ռազմական խունտային վտարելու համար ծևավորված բազմազգ ուժերի կողմից ուժի գործադրումը, 1999 թ. Արևելյան Թիմորում՝ INTERFET-ի առաքելության կողմից ուժի գործադրումը և այլն:

3. Խաղաղապահության ժամանակ ուժի գործադրումը սահմանափակ է, իսկ խաղաղության հարկադրման գործողության ժամանակ ենթադրվում է, որ *ուժ կարող է գործադրվել «միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը»* պահպանելու կամ վերականգնելու նպատակով: ՄԱԿ-ի կողմից օգտագործվող «գործուն խաղաղապահությունը» ենթադրում է ռազմական ուժի կիրառում ոչ միայն ինքնապաշտպանության, այլ նաև առաքելության մանդատի պաշտպանության նպատակով, հետևաբար ուժի գործադրումը ենթադրվում է *մարտավարական մակարդակով* (այսինքն՝ առանց ծանր ռազմական սպառազինությունների օգտագործման), որը *հիմնական տարրերությունն է խաղաղության հարկադրման գործողության ժամանակ կիրառվող ուժի գործադրումից*. Վերջինիս ժամանակ ուժի գործադրումն արտոնվում է *ռազմավարական կամ միջազգային մակարդակով*<sup>33</sup>:

4. Հարկադրման գործողությունները (տնտեսական պատժամիջոցներ՝ հողված 41 և ուժի կիրառում՝ հողված 42), Կանոնադրության VII գլխի համաձայն, կարող են իրականացվել բացառապես ՄԱԿ-ի Աև բանաձևի հիման վրա, կամ Կանոնադրության VIII գլխի համաձայն՝ այդ գործողության իրականացումը Անվտանգության խորհուրդը կարող է պատվիրակել տարածաշրջանային կազմակերպությանը: Թեև գործնականում առանց ՄԱԿ-ի Աև բանաձևի լիազորության տարածաշրջանային կազմակերպությունների և պետությունների կողմից իրականացվել են խաղաղության հարկադրման գործողություններ՝ «հումանիտար ինտերվենցիա» ենթատեքստով:

Եթե սկզբունքների կիրառման առումով քննարկվող երկու գործողությունների նիշն վերը նշված տարրերությունն անկիայտ<sup>34</sup> է, ապա տարրերությունը կարող է մերթընդերք «մշուշոտ»<sup>35</sup> ընկալվել հատկապես ուժի գործադրման տեսանկյունից<sup>36</sup>: Այնուամենայնիվ, ներկա պրակտիկան այնպիսին է, որ և խաղաղապահ, և խաղաղության հարկադրման գործողությունները արտոնվում են Անվտանգության խորհրդի կողմից՝ Կանոնադրության VII-ի գլխի համաձայն:

Ի դեպ՝ պետք է նկատել, որ գործուն խաղաղապահության, ինչպես նաև խաղաղության հարկադրման ժամանակ առաջ են գալիս մի շարք խնդիրներ՝<sup>37</sup> Համամիտ ենք այն կարծիքին, որ խաղաղության հաստատմանն ուղղված ցանկացած գործողության մանդատ պետք է լինի հստակ ձևակերպված, ինչը թույլ կտա խուսափելու տարրներումներից: Այն բոլոր գործառություններն ու առաջադրանքները, որոնք իրականացվելու են խաղաղության հաստատմանն ուղղված առաքելության կողմից, պետք է հստակ ձևակերպվեն: Կարևոր հարցադրումներից է նաև այն, թե արդյոք

<sup>33</sup> Տես "United Nations Peacekeeping Operations, Principles and Guidelines", 2008, DPKO, էջ 19:

<sup>34</sup> Տես Terry D. Gill, նշվ. աշխ., էջ 135-137:

<sup>35</sup> Տես "United Nations Peacekeeping Operations, Principles and Guidelines", 2008, DPKO, էջ 19:

<sup>36</sup> Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության Յողված 2(4)-ի՝ անդամ պետությունների կողմից ուժի կիրառումը արգելված է, նիշն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին է լիազորված արտոնելու ուժի կիրառումը, եթե դրա համար առկա են 39 հոդվածով նախատեսված նախադրյալները, այն է՝ խաղաղության խախտում, վտանգում կամ ազեւայի ակտ:

<sup>37</sup> Մանրամասն տես Alex J. Bellamy and Paul D. Williams, նշվ. աշխ., էջ 190-192, 211-213, 227-229, 296-298:

խաղաղապահ գործողությանը կամ խաղաղության հարկադրմանը նաև նաև պետությունները կշարունակեն ցուցաբերել անհրաժեշտ քաղաքական կամք, երբ կկանգնեն այս գործողությունների պահպանման համար ծախսերի էական աճի և մարդկային կորուստների աճի հավանականության փաստի առաջ: Թերևս վերջին հարցադրումը ամենագլխավորն է և հավասարապես վերաբերում է նմանատիա գործողություններին նաև նաև կցող թե՛ մեծ և թե՛ փոքր զորախումբ ունեցող պետություններին:

Հակամարտությունների կանխարգելման, վեճերի խաղաղ կարգավորման<sup>38</sup>, խաղաղության հաստատման գործում ՄԱԿ-ը կարևոր դերակատարում է վերապահում **տարածաշրջանային կազմակերպություններին**: Յետևապես, տարածաշրջանային կազմակերպությունների կողմից խաղաղության հաստատմանն ուղղված գործողություն իրականացնելու իրավական իիմքերը նախատեսված են առաջին հերթին ՄԱԿ-ի Կանոնադրության Գլուխ VІІІ-ի (Տարածաշրջանային համաձայնություններ) 52, 53 և 54 հոդվածներով: Մասնավորապես, 52 հոդվածը վերաբերում է տարածաշրջանային կազմակերպության կողմից իրականացվելիք խաղաղապահ գործողության հնարավորությանը, 53 հոդվածը հստակ ընդգծում է, որ տարածաշրջանային կազմակերպությունները չեն կարող իրականացնել խաղաղության հարկադրման գործողություն, և միայն ՄԱԿ-ի ԱԽ լիազորությամբ վերջիններիս կարող է վերապահվել խաղաղության հարկադրման գործողություն իրականացնելու լիազորություն, 54 հոդվածը նախատեսում է, որ տարածաշրջանային կազմակերպության կողմից ձեռնարկված կամ նախատեսվող գործողության վերաբերյալ «Անվտանգության խորհրդադրություն պետք է լիակատար տեղեկացված լինի»:

Անհրաժեշտ ենք գտնում հատկապես ուշադրություն դարձնել 52 և 53 հոդվածներին: Մասնավորապես, հոդված 52(1)-ում ամրագրված է, որ տարածաշրջանային համաձայնությունները կամ մարմինները կարող են լուծել «միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման առնչվող այնպիսի հարցեր, որոնք հարիր են տարածաշրջանային մակարդակի գործողություններին». պայմանով, որ նման համաձայնությունները կամ մարմինները և նրանց գործողությունները համատեղելի լինեն Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին»: Իսկ հոդված 52(2)-ով նախատեսվում է, որ ՄԱԿ-ի անդամները, որոնք մասնակցում են տվյալ տարածաշրջանային համաձայնություններին, «պետք է այդ տարածաշրջանային համաձայնությունների կամ մարմինների օգնությամբ ամեն ջանք գործադրեն տեղական վեճերի խաղաղ կարգավորման համար՝ նախքան դրանք Անվտանգության խորհրդին հղելը»: Այսինքն՝ կարելի է մեկնաբանել, որ տարածաշրջանային կազմակերպություններին մասնակից կամ անդամ պետությունները պետք է բոլոր ջանքերը գործադրեն «տեղական վեճերը» առաջին հերթին բացառապես խաղաղ միջոցներով կարգավորելու համար, դրանից հետո միայն դիմեն ԱԽ-ին: Իր հերթին ԱԽ-ն, համաձայն հոդված 52(3)-ի, «պետք է խրախուսի

<sup>38</sup> Կանոնադրության հոդված 33(1)-ում ամրագրված է, որ վեճին մասնակցող կողմերը «պետք է ամենից առաջ ձգտեն» վեճը «լուծել» սույն հոդվածով նախատեսված խաղաղ միջոցներով, այդ թվում նաև դիմելով տարածաշրջանային մարմիններին կամ համաձայնություններին»:

նման տարածաշրջանային համաձայնությունների կամ նման տարածաշրջանային մարմինների օգնությամբ տեղական վեճերի խաղաղ կարգավորման զարգացումը»: Իսկ հոդված 52(4)-ը նախատեսում է, որ «սույն հոդվածը ոչ մի կերպ չի խոչընդոտում 34 և 35 հոդվածների կիրառումը»<sup>39</sup>:

Համաձայն Կանոնադրության 53 հոդվածի՝ միայն Անվտանգության խորհուրդը կարող է տարածաշրջանային կազմակերպությանը կամ համաձայնությանը լիազորել ձեռնարկելու խաղաղության հարկադրման գործողություն, եթե դրա նախադրյալները Ախ-ն պարզել է 39 հոդվածի համաձայն և որոշել է կիրառել 41 և 42 հոդվածներով նախատեսված հարկադրական միջոցառումները: Այսինքն՝ առանց Ախ լիազորության տարածաշրջանային որևէ կազմակերպության կամ համաձայնության կողմից որևէ պետության դեմ ուժի սպառնալիք կիրառելը (հոդված 2(4)), ինչպես նաև պետության ներքին գործերին միջամտելը (հոդված 2(7)) անօրինական են: Համաձայն հոդված 53(1)-ի՝ «Անվտանգության խորհուրդն այնտեղ, որտեղ դա տեղին է, նման տարածաշրջանային համաձայնությունները և մարմինները օգտագործում է իր դեկավարությամբ հարկադրական գործողություններ ձեռնարկելու համար»: Նույն կետում, սակայն, ամրագրված է, որ «առանց Անվտանգության խորհրդի լիազորության, տարածաշրջանային համաձայնությունների արդյունքում կամ տարածաշրջանային մարմինների կողմից չեն կարող նախաձեռնվել նման հարկադրական գործողություններ»:

Խաղաղապահության վերոնշյալ իրավական հիմքերի ու սկզբունքների, ինչպես նաև խաղաղության հաստատմանն ուղղված այլ գործողությունների առանձնահատկությունների համալիր ուսումնասիրությունը բույլ է տայիս եզրակացնել, որ խաղաղապահությունը լավագույնս կկատարի իր առջև դրված խնդիրները, եթե հավատարիմ մնա իր մանդատին, համալրված լինի անհրաժեշտ կարողություններով, իր առաքելության ընթացքում առավելագույնս պահպանի խաղաղապահության երեք հիմնական սկզբունքները՝ կողմերի համաձայնությունը, անկողմնակալությունը և ուժ չգործադրելը, բացառությամբ ինքնապաշտպանության նպատակով և ծայրահեղ դեպքերում մանդատով նախատեսված գործառույթների իրա-

<sup>39</sup> Այս համատեքստում կարելի է վկայակոչել Կանոնադրության 35 հոդվածը, համաձայն որի՝ ՄԱԿ-ի ցանկացած անդամ «կարող է Անվտանգության խորհրդին կամ Գլխավոր ասամբլեային տեղյակ պահել (ուշադրությանը ներկայացնել – Գ. Դ.) 34 հոդվածում նշված բնույթի ցանկացած վեճի կամ իրավիճակի մասին»: Ի դեպ, հոդված 35(2)-ով նաև անդադրված է, որ «Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացնությունը պետությունը կարող է Անվտանգության խորհրդին կամ Գլխավոր ասամբլեային տեղյակ պահել (ուշադրությանը ներկայացնել – Գ. Դ.) ցանկացած վեճի մասին, որի կողմ է հանդիսանում ինքը, եթե նախապես սույն կանոնադրությամբ նախատեսվող խաղաղ կարգավորման պարտավորություն է ստանձնում տվյալ վեճի առնչությամբ»: Այսինքն՝ կարելի է մեկնարամել, որ 35 հոդվածում խոսքը Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր ասամբլեայի ուշադրությանը միայն այն վեճը կամ իրավիճակը ներկայացնելու մասին է, որը, համաձայն 34 հոդվածի, «կարող է հանգեցնել միջազգային լարվածության կամ վեճի», կամ որի «շարունակվելը» կարող է «վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը», եթե Ախ-ն հանգում է այդաից եղողակացության: Ավելին, 37 հոդվածում հստակ նշված է, թե որ դեպքերում վեճի կողմերը կարող են իրենց վեճը մերկայացնել Ախ-ին, իսկ 38 հոդվածով Ախ-ն «վեճի բոլոր կողմերի խնդրանքով կարող է կողմերին ներկայացնել վեճի խաղաղ կարգավորման հանձնարարականներ»:

կանացման նպատակով այնքան ժամանակ, քանի դեռ պահպանում է անկողմնակալությունը և չի վճարում հիմնական կողմերի համաձայնության շարունակական պահպանմանը: Յակառակ պարագայում, երբ ուժի գործադրումը հանգեցնում է հիմնական հակամարտող կողմերից որևէ մեկի համաձայնության վերացմանը և չի պահպանում անկողմնակալությունն իր գործողությունների ամրող ընթացքում, նշալ գործողությունը խաղաղապահությունից վերածվում է խաղաղության հարկադրման գործողության, իսկ խաղաղապահ առաքելությունն անկողմնակալ «երրորդ ուժից» դառնում է հակամարտության կողմ: Ինչպես նշվում է գրականության մեջ, հաջողված խաղաղապահության լավագույն չափորոշիչը «կայուն խաղաղություն» հաստատելն է<sup>40</sup>:

**ГАГИК ОГАНЕСЯН – Принципы, правовые основы и особенности миротворчества.** – Миротворческие усилия имеют целью предотвратить и разрешить конфликты, прекратить гражданские войны и обеспечить устойчивый и долговременный мир. Правовые основы действий, направленных на установление мира, в соответствии с Уставом ООН зафиксированы в общих полномочиях Совета Безопасности и Генеральной Ассамблеи ООН, а также в региональных соглашениях. Хотя в Уставе ООН не используется термин “миротворчество”, этот метод (инструмент) играет важную роль в разрешении конфликтов и установлении прочного мира.

Комплексное исследование принципов, правовых основ и особенностей миротворчества приводит к выводу, что, следуя своему мандату и оснащённое необходимыми средствами, оно способно в полной мере реализовать поставленные перед ним цели. При этом миротворцы должны следовать трём основным принципам: согласие сторон, беспристрастность и неприменение силы (кроме случаев самообороны и защиты мандата).

**GAGIK HOVHANNISYAN – The Principles, Legal Foundations and Characteristics of Peacekeeping Operations.** –Peace operations are aimed at conflict prevention, conflict resolution, post-conflict peace consolidation, ending the civil wars and establishing stable and lasting peace.

The legal foundations for the establishment of Peace operations are based on the general powers of the UN Security Council, General Assembly and the Regional Organizations and Arrangements under the UN Charter. Although the ‘peacekeeping’ concept is not found in the UN Charter, peacekeeping as a technique has a significant role to play in the peace process and the conflict resolution and establishing lasting peace.

The comprehensive study of the principles, legal foundations and characteristics of Peacekeeping allows to conclude that the objectives of peacekeeping are best achieved when peacekeeping is committed to the mandate, equipped with necessary capabilities for performing its tasks, and is based on three fundamental principles of the consent of the parties, impartiality and the non-use of force except in self-defence and defence of the mandate.

---

<sup>40</sup>Տե՛ս Michael W. Doyle and Nicholas Sambanis, Peacekeeping Operations, in "The Oxford Handbook on the United Nations", Ed. Th. G. Weiss, S. Daws, New York, Oxford University Press, 2008, էջ 323: